

ԵՐԵՎԱՆԻ ԴՆԵՐԻՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мелікъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խւրաքանչիւր տողատողին 10 կոպէկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Վշտագնեալ Նատալիա, Ստեփաննոս և Գէորգ Գուլամիբեանցները խորին ցաւաւ կցութեամբ յայտնում են տիբուլին՝ իր սիրելի ամուսնու, երկրորդ և երրորդ իրանց հարազատ և անմոռանալի հօր

ՄԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱՅ ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑԻ

ժահր. կարգի կատարումը այսօր, ամսիս 14-ին Հաւարարի ա. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում, ժամը 10-ին, իսկ թաղումը կը տեւի նոյն օրը Խօշիվանքի գերեզմանատանը:

Սորին վշտով խոցված Մարիամ Տէր-Մարտիրոսեան, Սաշատուր Բաղդասարեան և Բաղդասար Սաշատուրեան Նատալիանցները, Նատալիա Սաշատուրեան Բաղդասարեան, Եփեմիա Սաշատուրեան Մէլիք-Սահակեանցը, Նունէ Սաշատուրեան Մարգարեանցը ցաւօք սրտի յայտնում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին իրանց սիրելի և անփոխարինելի առաջին ամուսնու, երկրորդ և երրորդ հօրերը և վերջինների կորուստը:

ՆԱԳՈՐ ԽԱՉԱՏՐԵԱՆ ՆԱԽՏԻԿԱՆՑԻ

ժահր, որ տեղի ունեցաւ ապրիլի 11-ին: Հոգեհանգիստը կը կատարվի ամեն օր երեկոյան ժամի 7-ին իր բնակարանում (Ուգոյնի փողոց № 20 սնի. տուն): Յուզար-Կուրբուլիւնը 21-ին, հինգշաբթի օրը, առաւօտեան ժամը 10-ից դէպի Մողղու տուրք Գէորգ եկեղեցին: Թաղումը Խօշիվանքի գերեզմանատանը: (Կ. Չ.)

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Տեղական ինքնավարութեան զարգացումը.— Ներքին Տեսչութիւն. Մամուլ. Լեհական հարցը միջազգային կոմիտէի նիստում. Դրացիները Գործնում. Նամակ Հին Զուլայից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.— Ար. ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.— Հեռագրեր.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Մեր յօդուածներում մենք ասացինք, որ զեմստովոյի կազմակերպութիւնը մեր երկրում պէտք է ամփոփէ իր մէջ, իբրեւ մի գլուխ, նաև համաանդրկովկասեան մի զեմստով կամ ինքնավարական հաստատութիւն, որի կազմը վերցրած կը լինի ոչ թէ նահանգից, այլ գաւառից:

Անդրկովկասը ունի 57 գաւառ: Միջին թուով ամեն մի գաւառի վրա ընկնում է 100.000 հոգի: Ի հարկէ կան մեծ շնորհներ այս ու այն կողմ, բայց միջին թիւը այդ է: Եթէ նոյնպէս միջին հաշուով ընդունելու լինենք, որ իւրաքանչիւր գաւառ պէտք է տայ երեք ներկայացուցիչ, այն ժամանակ մենք կը ստանանք ներկայացուցչական ժողովում 171 անձ: Դա մի չափազանց խոշոր թիւ է, եթէ աչքի առաջ ունենալու լինենք, որ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան նման մի աւելի փոքր վարչական մարմին ունի ութսուն ձայնաւոր:

Անշուշտ, դա մի ենթադրական թիւ է, որը կը ստանայ վերջնական որոշում, երբ գաւառը և նրա կազմող մասերը ընդունած կը լինեն աւելի նպատակայարմար բովանդակութիւն: Ներկայումս Անդրկովկասում գոյութիւն ունեցող գաւառները, ինչպէս յայտնի է, բաժանված են գաւառամասերի կամ գաւառակների, որոնք յայտնի են «ուչաստով» անունով: Այդպիսի գաւառամասերի թիւը հասնում է 192-ի, կամ միջին թուով ամեն մի գաւառում աւելի քան երեք գաւառամաս: Երբ որ զեմստովոյի հիմնարկութիւնները մուտք կը գործեն մեր երկրի մէջ, իւրաքանչիւր գաւառամաս կարող կը լինի մի որոշ չափով ինքնուրոյնութիւն ունենալ և, եթէ նրանցից իրաւաւորը ցանկանալիս լինի իր ներկայացուցիչը ունենալու, նա վերջի-վերջոյ կուղարկէ կենտրոնական ժողովին ներկայացուցիչները մի թիւ, որ մօտ կը լինի մեր վերև յիշած հարուին:

Որքան կենտրոնական վարչութեան մարմին կազմը մօտ կը լինի երկրին և ազգաբնակչութեանը, այնքան աւելի անպիտան և բեղմնաւոր կը լինի նրա գործունէութիւնը: Եւ անկասկած՝ գաւառի

ներկայացուցչի անմիջական մասնակցութիւնը այն գործերում, որոնք վերաբերում են երկրին, կը տան վարչական մեքենայի գործունէութեանը այն կանոնաւորութիւնը և նպատակայարմար արտայայտութիւնը, որոնք պակասում էին մեզանում այժմ և դրանով խոչընդոտ էին հանդիսանում մեր երկրի կենսիչ ընդարձակ և բեղմնաւոր զարգացմանը:

Տեղական ինքնավարութեան խելացի կազմակերպութիւնը կը վճռէ գործնական շատ դժուարութիւններ և հնարաւորութիւն կը տայ վստահ կերպով նայել կենսիչ առաջ մղած նորանոր կարիքների և պահանջների երևալուն, այն հաստատ յոյսով, որ ազգաբնակչութեան ներկայացուցիչները հաւաքական ոյժերով միշտ ընդունակ կը լինեն ելք գտնել և որոշումներ կայացնել կենսիչ յարուցած էական խնդիրների համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Կովկասի վերաբերմամբ բարեացակամ տրամադրութիւնը գնալով կատարեալ յաղթական կերպարանք է ստանում մայրաքաղաքի ուսանաց ամուսնի մէջ: Բաւական էր, որ կառավարչական շրջաններում հովերի փոփոխութիւն նկատվէր,— և ահա նոյն իսկ Սովորինի լրագրական քարվաստարան, ինչպէս տեսանք անցեալ անգամ, սկսեց թափաշային լեզու հանել դէպի հայերը: Երէկ կատարել անհամբերութիւն, անծայր ու անվերջ ստախոսութիւն, սպառնալիքներ, հայոյնանքներ,—այսօր արդէն հին օտարակների մագիչները ի՞նչ բոլորովին ջարդված չեն, գոնէ, քաղաքավարութեան համար, ծածկված են թաւելով: Ուրիշ է իշխան Ուխտամիտը վերաբերմունքը դէպի հայերը: Նա իշխան Գոլիցինի և Վերիչիօի ժամանակ էլ, իբրև խմբագիր «С. Петер. Вѣд.» լրագրի, պաշտպանում էր արքայութիւնը և միակ հասարակական գործին էր, որ կարողանում էր մի յայտնի չափով դիմագրել հայակերական հոսանքներին: Այսօր էլ, երբ կովկասեան ազգերի հարցը դարձել է օրվայ կարևոր հարցերից մէկը, իշ. Ուխտամիտը նոր լրագրերը, «РАССВѢТЪ», կարողանում է անսխալ թէ վերջին տարիների կովկասեան քաղաքականութիւնը ուրիշ հետեանք չէր կարող առաջացնել, բացի այն անկերպարան դրութիւնից, որի մէջ այժմ գտնվում է Կովկասը: Լրագրի անցեալ համարներից մէկի մէջ պրօֆեսոր Մառ մի վերին աստիճանի տաք և համոզիչ յօդուածի մէջ նկարագրում էր վրաց եկեղեցու ներկայ դրութիւնը, պաշտպանում էր մի շարք եկեղեցական հարցեր, որոնք վրաց հասարակութեան համար կենսիչ և մահվան խնդիր են ներկայացնում: Իսկ լրագր-

ըր վերջին համարի առաջնորդողը նուրբված է հայերին և ունի «Հայ ազգի քաղաքական դերի մասին» վերնագիրը: Ահա ինչպէս է ընդունվում այդ դերը:

Թէ ինչ կարող էր լինել Ռուսաստանի համար իր ձեռնարկու ոգով և խելով հօր հայ տարրը, համառօտ կերպով արտայայտել դժուար է է: Ասիայի կէսը այդ ժողովուրդը ծածկել է առևտրական և առհասարակ կուլտուրական ձեռնարկութիւնների, կոմերցիաների ցանցերով: Աւելի լաւ քաղաքական առաջապահ մի ոյժ, քան հայերը, Թիւրքիայի, Պարսկաստանի, Միջին Ասիայի, Հնդկաստանի համար—Ռուսաստանը չէր պիտի էլ ցանկանար: Ինքը ճակատագիրն էր ուղարկում մեզ հայ պիտիներին իբրև մի պատրաստ զէնք, իբրև ամենապատրաստ ընտրած—խուզարկուները:

Ռուսաց լուսաւորութիւնը նրանք յօժարութեամբ անկում էին իրանց մէջ, երբ հայկական փողերով ստեղծված դպրոցների մէջ նշանաւոր տոկոս կազմում էին այն տղաները, որոնք թիւրքական կամ պարսկական սահմաններից ուղարկվում էին Անդրկովկաս սովորելու, որպէսզի յետոյ իրանց հայրենիքում դառնան ուսական ձեռք կրթութիւն ստացած ժողովրդական ուսուցիչներ:

Այս լրագրերը զարգացնում է այդ միտքը, բերելով մի ընդարձակ կտոր այն յօդուածից, որ դեռ 90 ական թվականներին, այսինքն հայակերութեան ամենակատարի ժամանակները, ապրած էր իշ. Ուխտամիտը «С. Петер. Вѣд.» լրագրում, ուր շարունակ հայերի նոյն այս քաղաքական դերն էր արծարծվում:

Մեր կողմից մենք կաւելացնենք, որ ճիշտ նոյն հայեացքները 1858-ի կաթողիկոսական ըրտութեան ժամանակ գործով և գրութիւններով արտայայտում էր այն ժամանակվայ փոխարքայ իշխան Բարեառնիսին: Ընդհանուր հայութեան համակրանքները գրաւելու և այդպիսով իր ազդեցութիւնը արևելքում հաստատ պահելու համար, Ռուսաստանը, արդէն էր իշխան Բարեառնիսին, պիտի ուսանայ յերի վերաբերմամբ տոգորվի բարեացակամ զգացմունքներով և չը պիտի թոյլ տայ, որ Ռուսաստանի սահմաններից դուրս ապրող հայութիւնը ենթարկվի ուսանաց քաղաքականութեան թշնամի օտար պետութիւնների ազդեցութեան: Յիսուսական թվականներին յայտարարված և շուտով մոռացված այս քաղաքական ծրագիրը այժմ են սկսել քարոզել ուսանաց մի քանի լրագիրներ: Իսկ РАССВѢТЪ-ը վերջացնում է իր յօդուածը այսպիսի տողերով:

Այս բանը մենք, սակայն, չը կարողացանք իւրացնել: Բայց առ քայլ վատաւում էին մեր իշխանութիւնները դէպի հայերը: Բազուկ կոտորածը վերջին ահիւրդն էր:

Ի դէպ, Բազուկ կոտորածի մասին նոյն լրագրում ապրիլ էր մի շատ ուշադրաւ յօդուած:

ԼԵՀԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԻՆԻՍԿԻՆԻ ԿՕՄԻՏԵՏԻ ՆԻՍԱՌՄ

Ներկայ ապրիլի 6-ին միջխորհրդի կոմիտէում, ասում է РҮСВ լրագրը, շարունակեց Լեհական Թագաւորութեան հարցի զննութիւնը: Գտնելով պետական այդ բարձր ինստանցիայի կարծիքները և նախնական վճիռները չափազանց ընդուն ու կարևոր հայերի համար, առաջ ենք բերում մանրամասնաբար:

Միջխորհրդի կոմիտէում ցանկալի է համարել, որ Լեհական Թագաւորութեան ստորին դպրոցներում լեհ լեզուին յատկացված ժամերի թիւը շատացվի և թաւաւորութիւնը էլ աւանդվի լեհական լեզուով: Ռուսերէնի դաստաւութիւնը մնալու է իր նախկին իրաւունքներով ու չափով:

Միջնակարգ դպրոցներում բոլոր առարկաների դաստաւութիւնը թողնել ուսուցչին, բայց պահպանել դեռ լեհական լեզուին իշխանի իբրև լեզուի դերը: Լեհական լեզուին և կրօնի դաստաւութիւնը լեհ լեզուով:

Մասնաւոր միջնակարգ դպրոցներ կարող է բացանել ամեն մարզ: Այդ դպրոցներում բոլոր առարկաները կարող են աւանդել լեհերէն,

բացի ուսու լեզուից և ուսու պատմութիւնից: Միայն այդ դպրոցներն աւարտողները չեն ունենալու ոչ մի պետական կամ այլ իրաւունք և արտօնութիւն:

Բարձրագոյն դպրոցներում անհրաժեշտաբար պէտք է մնայ ուսուցչին լեզուն և ամեն ինչ միայն այդ լեզուով աւանդվի: Բայց դրա հետ միասին պէտք է բարելաւել և զօրացնել լեհական լեզուի արժեքը:

Մասնաւոր ընկերութիւններում և գմինաների կամ գիւղականների կառավարութիւններում կարելի է գործ ածել լեհական լեզուն: Ընկերութիւնները կարող են ազատ գործածել լեհերէն իրանց փոխարքայ յարաբերութիւնները և գործավարութիւններին մէջ, միայն այն թղթերը, որոնք ենթարկվելու են վերաքննութեան, լեհերէնի հետ մեծաւոր պէտք է ունենան և ուսուցչին:

Կոմիտէում գրականապէս վճռեց Լեհական Թագաւորութեան սահմաններում քաղաքային և գիւղական ինքնավարութիւն կամ զեմստովոյն ստանալու խնդիրը: Վճռվեց նախապէս ձեռնարկել գեմսկի օրհնագրութեան մշակման այդ երկրի համար, միայն այն պայմանով, որ ի՞նչ այդ ժամանակամիջոցում գիւղական ինքնավարութեան օրէնսդրութեան մէջ ընդհանուր փոփոխութիւններ տեղի ունենան, լեհականը և ենթարկվի այդ նոյն փոփոխութիւններին: Կարճ՝ հաւասարեցնել նրա այդ իրաւունքները բուն ուսական նահանգների իրաւունքներին:

Լեհացիների պետական պաշտօններ վարելու իրաւունքի հարցի առիթով վճռված է, պահպանելով լեհացիների այդ իրաւունքը սահմանափակման սկզբունքը, մի քիչ նուազացնել այդ սահմանափակումը: Այդ հարցի վերջնական լուծումը թողնված է մինչև որ միջխորհրդի կազմին այն պաշտօնների մասնաւոր ցուցակը, որոնք լեհացիներին յանձնելու ցանկալի չէ: Իսկ այդ ցուցակը յանձնված է միջխորհրդի կազմելու դեռ աւելի վաղ, քան արեւմտեան 9 նահանգների գործերի ընկնութիւնն սկսելը:

Լեհական հողատիրութեան հարցի առիթով կայացրել են հետեւեալ որոշումը. ցանկալի է ընդարձակել լեհացիների իրաւունքներն այդ մասում և ոչնչացնել բոլոր այն սահմանափակումները, որոնք իսկապէս անհրաժեշտ չեն համապետական շահերի պաշտպանութեան տեսակէտից:

Դատաստանական կարգերի վերաբերութեամբ էլ որոշված է հնար եղածին չափ վերացնել այդ երկրի և ներքին նահանգների դատական օրէնքների մէջ եղած բոլոր տարբերութիւնները:

ԳՊՐՈՏՆԵՐ ԵՎ ԳՈՐԴՆՈՒՄ

Երջանիկ օրեր էին, երբ ուսումնաւոր ու ոգևորութիւնը ձեռք ձեռքի տուած՝ կենսի տուին և մեր մոռացված ու աշխարհից կտրված գողթներ, երբ այս կողմի հայ ժողովուրդն էլ, տգիտութեան քանակութիւնից զգլած, լոյսի ազատարար դրօշակն էր ուղղել դէպի: Բացվեցան հայի մտքի սչեքներ. զգաց նա ուսման փրկարար զօրութիւնը և, իր ոյժերը լաւելուով, պատուաւոր տեղ տուեց նրան: Ամենափոքրիկ ու խուլ գիւղերն անգամ—խօսքս հայաբնակ գիւղերի մասին է—կենդանացան, դէպի լոյսն ընթացան: Նրանք մի տեսակ մրցումով ու ագիլ նախանձով ճիգ էին գործ դնում յետ չը մնալ իրանց աւագ եղբայրներից:

Անսահման ուրախութեամբ թրթռում էր սիրտը, երբ տեսնում էիր, որ Ռամիսի նման մոռացված մի անկուս միաժամանակ պահում էր ուսուցիչ, վարժուհի և ծխատէր քահանային՝ իբրև կրօնուսույց. երբ տեսնում էիր գիւղացի երեխան մանուկներին պայուսակները թխելու տակ, ուրախ քրքրելով ուսումնարան շտապելու:

Եւ մեր հայ գիւղացին սերտ էր իր դառն

քրտինքն արդիւնքը գոհում, որովհետեւ թէ իր գաւառին էր լուսաւորվում ուսման սուրբ աւազանի մէջ և թէ ինքը մի նոր գեղեցիկ կեանքով բարեփոխվում շնորհիւ իրան նուիրւած կարեկից ուսուցիչներին:

Այն գիւղերը, որոնք տգիտութեան խաւարի ձորաններում դարձրել անշարժացած, քարացած էին մնացել, սկսում էին շարժվել, գնալ դէպի լոյսը: Այնտեղ, ուր առաջ խոր լուսթիւնն էր մահվան հրեշտակի նման իր թեւերը տարածում, այժմ մի պիտանի կեանք էր սկսում կոկոնել:

Բայց ախր... այդ օրերը շատ կարճատեւ եղան, այդ բոլորն ոգևորութիւնը շատ շուտ անցաւ: Այժմ մեզ մնում է միայն վերաբարձրել այդ երջանիկ յուշերը և նրանով մխթարվել:

Ո՞վ կարող էր մտածել, որ մտայն ամպերը կուտակվում են նորից մթնացնելու հայի պարզել սկսող երկինքը: Ո՞վ կը կարծէր, որ խաւարից փախչող ժողովուրդը նորից նրա անդունդը պիտի գլորվէր:

Փակվեց այն հիմնարկութիւնը, որի համար հայը այնքան ոգևորութիւն ու ջանք էր սպառել և հարկւրաւոր մանուկներ փողոց ձգվեցին:

Ի՞նչ անէր խեղճ հայը. դէպի լոյսը գնալ՝ արգելվում էր. կէս ճանապարհին կանգնել՝ անկարելի է: Նորից խաւարի գիրկը դառնալ, խաւարի, որի ստեղծի բնութեան դէմ յանդէսն էր բնութագրում: Եւ գիւղացու առանձին միայն վերջին ճանապարհին էր բաց, թէ և խնստ գարնունը, շատ անթափ:

Հայը շուտ, թուլացան նրա բազուկները և կեանք խոտացող ոգևորութիւնը մարեց:

Մեր ճահիճ իրականութեան մէջ այդ կարճատեւ փոփոխութիւնը, կարծես, միայն նրա հարթ տեղի ունեցաւ, որ աւելի ստատիկ էր կերպով աչքի ընկնէր տգիտութեան և ուսման, լոյսի և խաւարի հակադրութիւնը:

Գողթնը դարձաւ իր հին պատկերն ստացաւ. էլի անշարժութիւն ու մեղմութիւն բոլոր գիւղերում. էլի նոյն լճացած ու գերեզմանային կեանքն ամեն տեղ...

Չարաբար 1896 թուին յետոյ պետական ծրագրով ու հասարակութեան (մի տանուտէրական) ծախքով մեր Գողթնում էլ սկսեցին վարժարաններ բանալ: Այդ աշակերտ գաւառակում բացվեց միմիայն 3 դպրոց—Վանանդ, Բիւհաւ և Եւջի թուրք գիւղերում: Այդ 3 էլ նման են մի-մի կանթիլի, որ անգոր է լոյս սփռելու շրջակայ համապատասխան միջոցներով:

Մեր հարեան թուրքերը համարեա թէ չեն օգտվում այդ հաստատութիւններից, որովհետեւ մինչև օրս էլ շարունակում են ուսումը, դըպրոցը ֆինասակար համարել: Իսկ հայերը, եթէ ցանկանան իսկ, չեն կարող նրանցից օգտվել: Մանուկները համար դիւրին չէ ձմեռային սառնամանիքներին 1—2 ժամ անհակ ուսումնառանքն գնալ: Իսկ խոսք օրերը ընդերք ուսման մասին. հասկանալի է, որ ոչ մի հայ ծնող չի համաձայնվել իր աղջիկը թուրքի գիւղը, և այն էլ այդչափ հեռու, կարգաւ ուղարկել:

Իրանց դաւաններին գոնէ անգարաքութեան ճանկերից ազատելու համար, մեր քիչ շատ խոշոր ու աչքի ընկնող գիւղերը ստիպւած եղան իրանց միջոցներով դպրոցներ բաց անել: Այսպէս են՝ Վերին և Ներքին Ագուլիսները, Տիւրա, Տանակերտ և Ագա հայաբնակ գիւղերը: Այդ էլ մի բան է, եթէ այդ դպրոցները կարողանային գոնէ յիշեալ գիւղերի բոլոր երկուսն անսովորական ապաստանել: Բայց ուր է: Միգրանտ դպրոցներ ծրագրելը և ուսման ծախքերի քանակութիւնը շատ ծնողների հնարաւորութիւն չեն տալիս որդիներին վարժարան ուղարկելու: այնպէս որ մեր մանուկները 2/3 մասը մնում է ուսումնառանքի հետո, անկիրթ:

Իսկ մնացած հայ գիւղերը, որոնք երբեմն երջանիկ կեանքի պատկերն էին երազում, նորից տգիտութեան աստուծու խեղճութեան տակ ընկան՝ այնտեղ տանջվելու, այնտեղ հիւսկնելու ու մեռնելու...

Թող ներվի ինձ մի երկու խօսք ևս մեր ներքին գիւղական ուսուցիչներին մասին. նըրանք (բացառութիւններ չառնելիս են) իրանց նախորդները յարգն ու հեղինակութիւնն այլ ևս չեն վայելում. նրանց գոյութիւնը գիւղերում համարեա թէ անակառուցի է:

և տալիս ու վրայ արեց խաղաղ սրտերը. աւրինոտ դրաման այնքան անպատկեր և անակնկալ էր, որ հեշտութեամբ չէր մոռացվում. «Ինչո՞ւ կատարվեց այդ», միթէ հայի ճակատագիրն էր «միշտ ջարդվել» լավում է գիւղացու բերանից և շտապում է օգնութիւն հասցնել աղէտից փախած իր եղբայրներին: Մեր գիւղում ևս մի փոքրիկ գումար հանգաւակեց ի նպաստ Բագուի կարօտեալներին, որը և ուղարկվեց Սմբատրութեանը:

Մի քանի օր առաջ տեղս էր եկել Երնջակի վանահայր արքեպիսկոպոսը, որը մօտ ծանօթ է մեր գիւղի հասարակութեանը: Եկեղեցում երկար քարոզ խօսեց. քարոզի մէջ շեշտեց այն միտքը, թէ պէտք է եկեղեցին բարելաւել, չը պէտք է Աստուծու տունը այսպէս խեղճ վիճակի մէջ թողնել: Եւ իսկապէս մեր եկեղեցին համարեա թէ քայքայման է ենթարկվել. մի հասարակ տուն է, առանց գմբէթի: Մեր եկեղեցու շինութեան հարցը համարեա ամեն տարի դրադեցնում է մեր հասարակութեան, բայց շնորհիւ նրա թոյլ վերաբերմունքի, մինչև այժմ էլ խաբարով վիճակի մէջ է գրանվում:

Երեկթուրու գծի շինութեան գործը շարունակվում է: Հաւատացնում են, որ ձմեռը ապրանքատար գնացքների կանոնաւոր երթեւեկութիւն կը լինի. կայարանն ընկնում է մեր գիւղից 5 վերստ հեռու, մաքսատան մօտ:

Այս տարի մեր կողմերի ցանքերը լաւ են, եղանակը անձրեւային է, սաստիկ շոգեր էլ են լինում: Արաքսը այս տարի բաւական բարձրացել է. նորերս մի քանի տասնեակ հոգի զոհ գնացին Արաքսի փրփրաղէջ ալիքներին: Դէպքը այսպէս պատահեց. 35—40 հոգի պարսիկ անցորդներ նաւակով պէտք է անցնէին Ռուսաստան: Արաքսի հէջն մէջտեղում նաւակը, բռնի ծանրութեան շնորհիւ, սկսում է խորատուվել: Այդ սրտաճմլիկ դէպքի տեղը հաւաքվեց պարսիկների ամբոխը: Ցաւալի տեսարան էր, մարդիկ խեղճվում էին. հազիւ մի քանի բազէ լավեցին խեղճվողների սրբապատուով ձայները և աղաղակները, որից յետոյ ամեն ինչ լռեց: Մի քանի պարսիկներ իրանց ջուրը գցեցին աղաղակու նըրապակով, բայց սրտեղ... չը կարողացան և ոչ մէկին ազատել. ջուրը ծածկեց ամեն ինչ. այդքան հոգուց թիավարները միայն ազատվեցին:

Մինաս Մինասեանց

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 12-ին

Սոնարհարար խնդրում եմ յարգելի խմբագրութեանը մի անկիւն շնորհիւ հայր Կոմիտասի տուած երկու համարներին հետեւալ համառօտ հաշիւ:

Մուտք եղել է առաջին համարից 1408 թ. 56 կ., երկրորդից—515 թ. 80 կ., իսկ պրօգրամներին վաճառումից—52 թ. 20 կ.—գումարն անում է 1976 թ. 56 կ.:

Ծախքեր եղել են. 1) Թատրոնի վարձ և դանդաղ ծախքեր—398 թ. 75 կ., 2) Երգեցիկ խմբի ճանապարհածախք—600 թ., 3) խմբի սպորուստի, յայտարարութիւններ, ֆիլմերի, պրօգրամների և այլ մասեր ծախքերի համար—292 թ. 90 կ., գումար—1291 թ. 65 կ.: 684 թ. 91 կ. գումար արդիւնքի 100%-ը, համաձայն սկզբնական յայտարարութեան, ահա ուղարկում եմ յարգելի խմբագրութեանը: Բագուի աղէտի գոհների օգուտին (68 թ. 50 կ.): իսկ մնացած 616 թ. 42 կ.—ը, յանձնվեց հայր Կոմիտասին գործադրելու իր ճանապարհ երգերի տպագրութեան համար:

Տիկ. Ն. Ղաւբարեան

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Ապրիլի 4-ին

Ներկայումս, երբ ամեն քաղաքի համարեա ամբողջ աշխատող մասսան ձգտում է դուրս գալ իր ստանիլի նեղ վիճակից և պահանջում է ֆիզիկական և թէ մտաւոր հանգստութիւն ու մարդկային մի քանի ամենաանհրաժեշտ իրաւունքներ, մեր Ալեքսանդրօպօլի ծառայողները, լինի նա հայուսպալ, գործակատար, դարբինի և կոշիկարի աշակերտ, դեռ գլխակոր տանում է իր դուռն ստրկական լուծը, առանց մի բոլոր մտածելու ու հաշիւ տալու, թէ ուր կը տանի նրանց առաւօտից մինչև երեկոյ ոտքի վրա ընկնված, թուլացած մարմնով տարած ձանձարի անվերջ աշխատութիւնը: Այստեղ աշխատութիւնը սկսվում է շատ վաղ առաւօտից: Ծառայողների արեւով գործի գալը այստեղ ոչ միայն անօթ է համարվում խաղէկին կողմից, այլ վերջինս անվերջ նախատինքներ է թափում խեղճ գլխին հանդերձ հայոյանքներով. «օրը եկել ճաշ է դառնել, ասում է նա, իսկ դու նոր ես բարեհաճում գործի գալ:

Սոնարհարար կողմում են, ով էր կամենում է, միայն ոչ վաղ 9 ից, իսկ արեւածաղնիկներում շատ անգամ աշխատութիւնը շարունակվում է մինչև ժամը 10-ը և աւելի. շատերը կիրակի օրերը մինչև անգամ բաղդ չեն ունենում աղատ դճալու ու իրանց սեփական ցանքի վրա մտածելու: Աւելացրեց այդ բոլորի վրա ծառայողների ստացած չնչին ուժիկը, եթէ միայն այդ անունը կարելի է տալ. և դուք կը ստանաք Ալեքսանդրօպօլի ծառայողների ներկայ աննախանձելի պատկերը: Արեւստանդներում ու մի քանի խանութներում

12—16 տարեկան ծառայողների մեծամասնութիւնը, ինչ ասել կուզէ, աշխատում են ձրի, իսկ աւելի հասակաւորները մինչև 18 տարեկան ստանում են 40—50—60 րուբլի տարեկան. ուրեմն մինչև 18 տարեկան ծառայողները ստանում են օրեկան միջին թուով 17 կոպէկ, այսինքն ամեն մի աշխատած ժամի համար մի կոպէկ: Ահա այսպէս են գնահատում այստեղ աշխատութեան ժամը: Իսկ ով կարող է մեզ ծառայողների այս անել դրութիւնից ազատել, եթէ ոչ մենք ինքներս: Եթէ մի բժիշկ չէ կարողանում գտնել ու հասկանալ իր հիւանդութիւնը դարման անելու համար, ոչ մի ուրիշ բժիշկ չէ կարող հասկանալ այդ ու օգնութեան հասնել: Եթէ մենք Ալեքսանդրօպօլի ծառայողներս չը հոգանք մեր մասին, չաշխատենք բարելաւելու միջով ձաւել, ես կարծում եմ ոչ ոք չէ կարող մեզ այս ստոր աստիճանից բարձրացնել:

Գործակատար

ՆԵՐՓԻՆ ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 12-ին Թիֆլիսի դուռայի կողմից պ. քաղաքագլուխը, ուղարկւոյի անդամները և ձայնաւորները 2 հոգի ներկայացան գեներալ-լէյտնանտ Մալախյան և շնորհաւորեցին նրա նշանակվելը Կովկասի փոխարքայի օգնական: Բաղադրադրութիւն իր ձառում մտանալի արեց, որ նորին գերազանցութեան արտայայտած վստահութիւնը դէպի հասարակական ուժերը ինքնավարութեանը յոյս է տալիս այսուհետեւ էլ նրան հեռանալով շարունակել աշխատել ազգաբնակչութեան օգուտ ու բարօրութեան համար: Կովկասի փոխարքայի պաշտօնակատարը շնորհակալութիւն յայտնեց պատգամաւորներին և խնդրեց նոյնը հաղորդել և Դուռային. յետոյ նա յարակցեց, որ այսուհետեւ էլ կը զբիւլ հասարակական ուժերին երկրի ազգաբնակչութեան օգուտ համար, մի բան, որ խոստացել է անել և Կովկասի Փոխարքան:

Հաստատ ու վստահելի աղբիւրներից հաղորդում են «НОВОСТИ» լրագրին, որ դեռ մինչև կոմս Վորոնցով-Դաշկովի Կովկաս հասնելը այստեղ կը կազմվեն յատուկ ընտրովի կօմիտէներ, բոլոր ազգութիւններից, դասակարգներից և հասարակական հիմնականութիւններից ներկայացուցիչներ ընտրելու համար, որոնք երկրի բարձրագոյն վարչութեան հետ միասին կը ձեռնարկեն երկրի դրութիւնը բարելաւելու աշխատանքներին: Այդ աշխատանքներին մասնակցելու է և հայ բարձրագոյն հոգեւորականութեան ներկայացուցիչը—ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ I-ը: Կոմս Վորոնցով-Դաշկովը հաստատ մտադրութիւն ունի Կովկասի հասարակական ուժերի հետ միահամուռ գործելու, հաշիւ առնելով նրանց կարծիքները և ցուցումները:

Մի տիկնոջից, որը չէ ցանկանում իր անունը յայտնել, ստացանք Չատուի տօնին չը բաւորներին բաժանելու համար 2 րուբլի:

Կօրէկօի յանձնաժողովում մասնակի ներկայ օրէնքները ընկնիս շատ մեծ ու տաք վիճաբանութեան առիթ է տուել ցէնզուրական օրէնքների § 4-ը—«Վնասակար ուղարկեան» վերաբերեալ: Պաշտպան են եղել այդ խեղճող յօդուածին իշխան Յէրաշէլիւ և Իւզեֆօվիչը, իսկ յանձնաժողովի անգլին մեծամասնութիւնը դէմ է եղել: Չայների ճնշող մեծամասնութեամբ որոշվել է ոչնչացնել այդ յօդուածի 4 կետերն էլ և պատժական նոր օրէնքներ մամուլին ու խօսքին վերաբերեալ մասը մշակող ենթակօմիսիային յանձնվել է մշակել դատաստանական պատժական օրէնքներ այդ 4 կետերում նախատեսած յանցանքների համար: «Речь»-ը պարբերականն է, որ յետոյ յանձնաժողովը, կրկին ճնշող մեծամասնութեամբ, ոչնչացրեց ցէնզուրական օրէնքների VIII բաժինը, այսինքն 93—113-դ յօդուածները:

Թիֆլիսի քաղաքագլուխ պ. Վերմիշեանը Կովկասի փոխարքայի օգնական Ն. Ա. Սուլ-թան-Կրիմ-Գիրէյին հետեւալ հեռագիրն ուղարկեց. «Քաղաքային դուռան ապրիլի 7-ի

նիստում միաձայն որոշեց ձեր գերազանցութեանը յայտնել իր սրտագին ուրախութիւնը Կովկասի փոխարքայի օգնականի բարձր պաշտօնին ձեռն հրաւիրելու առիթով և ցանկալ ձեռ լիակատար աշխատութիւն ձեր նոր պաշտօնում, ուր, մենք խորապէս վստահ ենք, կարտայայտվեն և ձեր իսկական սէրը դէպի երկրի բոլոր ազգաբնակչութիւնը, և ձեր հաւատը դէպի նրա ստեղծագործական ուժերը»:

«Речь»-ը հաղորդում է, որ Մոսկվայի Լաւրեան ճեմարանի գիմնադրական վերին 4 դասարանների աշակերտները ճեմարանի տեսուչ պ. Միլէրին խնդրեցին հետեւի, որ հեռացնէ դասատուները մէկին, որը թոյլ է տալիս իրան կօպտարար վարվել հայ աշակերտների հետ:

Ընթերցող հասարակութեան ուղարկութիւնը հրաւիրում ենք Չխարի հրկիզեալներ օգուտն ապրիլի 21-ին տրվող ցերեկվայ հանդիսի վրա: Մեր մանուկները չարապաղաց զրկված են խելացի ու կրթիչ խաղերից. նրանց միակ դաստիարակները փողոցն ու աղախներն են յաճախ: Այժմ բարեգործական նպատակով տրվում է մի մանկական հանդէս հարուստ ծրագրով. ինչո՞ւ չը տանել մեր մանկիկներին, որ և նրանք օգտվեն, և Չխարի հրկիզի գոհերը մի քանի կօպէկ ստանան իրանց ցաւը դարմանելու համար: Լսում ենք, որ նոյն հանդէսը կը կնքուի ևս և Հաւաքաբում, որը միշտ դուրի է եղել հարուստ թաղերի համար սարքվող պատահական մանկական հանդէսներից:

Կովկասի փոխարքայի օգնական Ն. Ա. Սուլթան Կրիմ-Գիրէյը հետեւալ հեռագիրն է ուղարկել դուռայի ձայնաւոր ինժեներ Կրեւկոսեանին, իր պատասխան մի խումբ ձայնաւորներն ուղարկած շնորհաւորական հեռագրի: «Մերանց շնորհակալ եմ ձեզ, Գիրէյը Գիրէյը, որ ինքնուրույն և հեռագրերն ստորագրող բոլոր անձերին թանգագին ողջոյնի և դէպի ինձ ունեցած գիշող վերաբերմունքի համար»:

Կօստրօմայի բնակիչներից մի խումբ խնդրել է ներկայացրել նահանգապետին, որ միջոցներ ձեռք առնվում ազգաբնակչութեան կեանքը, պատկեր և գոյքը աշտպանելու գիւնդներին ու սրկիաների վերաւորանքներից և «սեհաբիւրեակի» կողպուտներից:

Բուլթայի ագնուականութեան ժողովը ապրիլի 11-ին միաձայն ընդունել է ամենահպատակ ուղերձի մի նախագիծ, որի մէջ ասված է. «Բուլթայի նահանգի վրաց ագնուականութիւնը, համեմաղա լինելով այն ցանկութիւնների հետ, որոնք յայտնված են Թիֆլիսի նահանգի վրաց ագնուականութեան ամենահպատակ ուղերձի մէջ, իր սրբազան պարտքն է համարում արտայայտել ամենախոնարհ համոզմունք, թէ վրացի ժողովուրդը հանգստացնելու և նրա խաղաղ կուլտուրական զարգացման միակ ճշմարիտ միջոցը կը լինի միայն այն, որ Վրաստանին, բաղկացած Թիֆլիսի և Բուլթայի նահանգներից, Բաթումի, Սուխումի և Չարաթալի շրջաններից, տրվի իրաւունք կառավարվել այն օրէնքներով, որ կը մշակէ տեղական ներկայացուցչական ժողովը, ընտրված ընդհանուր ուղիղ, դարմանի և վերաստանի ամբողջ ազգաբնակչութեան համար հաւասար ձայնատուութեամբ», այսինքն ներքին ինքնավարութիւն:

Միերթում գիւղական ինքնավարութիւն կամ դեմստով մտցնելու յատուկ յանձնաժողովը պէտք է սկէ գործիլ բուն տեղի վրա, տեղական ազգաբնակչութեան անմիջական մասնակցութեամբ: Այդ պատճառով Իրկուտսիկ գիւնդալ-նահանգապետ կոմս Բուլթայիսօնի այս օրերս կը մեկնի Իրկուտսի:

ԲՈՒԹԱՅԻՄԻՅ մեզ գրում են. «Ամսիս 3-ին տեղական գործակալ հայր Ամիրադեանից առաջարկութեամբ, Բուլթայի գիւնդական գիւնդալ նահանգապետ Չանբակուր-Օրբեկաւուն ներկայացաւ Չխար գիւղի այրվածներին կողմից մի պատգամաւորութիւն, խնդրելով իշխան նահանգապետից միջնորդութիւն, որ հարկն է, որպէս զի տրվի նրանց դարմանական օժանդակութիւն: Գիւնդալ-նահանգապետը միջնորդութիւնով յոյս է տուել, որ անպատճառ կը միջնորդէ այդպիսի օգնութեան համար փոխարքայի առաջ, երբ կը գայ Թիֆլիս:

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՉՈՒՂԱՅԻՑ

Ապրիլի 5-ին

Բազում կատարված սարսափելի ոճրագործութիւնը ցնցեց մեր գիւղի հասարակութեանը:

այս բոլորի համար պահանջել է նրանցից կարևոր տեղեկությունները:

ԱնԱՆՏԱՅԻՆ մեկ գրում են. «Բաղադրում երեսները մէջ սաստիկ տարածվել է կարմիր հիւսնադուրսը: Տուն չը կայ համարեալ, որ գերծ լինի այդ արտօնը: Սակայն հետևանքը բարի է և զոհեր շատ հազիւ են պատահում»:

ԱՆԷՐՍԱՆԴՐՈՊՈՒԹՅՈՒՆ մեկ գրում են. «Ապրիլի 10-ին ժողովրդական տանը դերասան Արմենիան և տիկ. Դուրան-Արմենիան, մասնակցութեամբ դերասան Սաթախ և տեղական սիրողների, ներկայացրին առաջին անգամ Ալեքսանդրովսկու «Վանդալի» օպերան: Վանդալի» դրամա 4 գործողութեամբ: «Վանդալի» դրաման թէ խաղի և թէ ընտրութեան կողմից մինչև այժմ Ալեքսանդրովսկու ներկայացված պիեսների ամենաաշխույժներից մէկն է: Հասարակութիւնը շատ լուրջ ուշադրութեամբ էր լսում դերակատարներին և աշխատում էր բաց չը թողնել ամեն մի արտասանած խօսքը, ուստի այդ պիեսն ընտրութեամբ լսողից խորը տպաւորութիւն: Միայն այս անգամ, ափսոս որ դահլիճը կիսով չափ դատարկ էր, որը կարելի է վերագրել գների աւելացնելուն»:

ՄԵԾ-ՆԱՆՁԱԼՈՒԹՅՈՒՆ գիւղից (Ախալքալաքի գաւառ) մեկ գրում են. «Մարտի 27-ին տեղիս. Աստուածածնի եկեղեցում, պատարագից յետոյ կատարվեց հոգեհանգիստ հանգուցեալ Բ. Միքայելեանի մահվան առթիւ: Երկու ժողովուրդի խումբ բազմութեան ներկայութեամբ: Ծառ արտասանեց Անդրեաս Բահանայ Շահապահանցը»:

ԳՈՒԹԱՅԻՄԻՅ մեկ գրում են. «Տեղական եկեղեցական բառաձայն խումբը պարբերաբար երգում է թէ եկեղեցում և թէ մասնաւոր երգչախումբներում: Գրանով ժողովուրդը բաւական սովորեց խմբական երգերի: Տուն չը կայ, ուր երեխաները խմբական հայերէն մի կամ երկու երգ չը գիտենան—մասնաւոր ժողովրդական լէվները, որոնց առաջին տարածողն է եղել այստեղ հանգուցեալ Կարա-Մուրզան և ապա ուրիշները»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՁԸ

Մառախուղներ եւ առաջիկայ պահեալով: Պատերազմից հետո գրում են «Times» լրագրի, որ տեղական զինուորական շրջաններում վախճանում են մառախուղներից, որ սովորաբար տիրում են տարվայ այդ ժամանակ ձմռանը: Կղզու մաս: Սաստիկ մառախուղները դիւրութեւն են տալիս ակնասոււնքներն յարձակում գործել մեծ նաւերի վրա:

Ֆրանսիայի չեզոքութիւնը: Կոմս Բեդլնայթը նկատում է «Berliner Tageblatt» լրագրում, որ Ֆրանսիան միշտ էր չէզոքութեան սկզբունքն է համարել ծովային պատերազմում: անասնան հիւսնադուրսից ցոյց տուլ պատերազմող երկու կողմերին: Կա: Հակառակ Անգլիայի, որ սահմանափակում է իր նաւահանգիստները հիւսնադուրսիցը միայն 24 ժամվայ ժամանակամիջոցով և պատերազմող կողմի մի և նոյն նաւերն երեք ամիսը միայն մի անգամ է թոյլ տալիս ամբողջ վերջին անգլիական մի և նոյն նաւահանգիստից, Ֆրանսիան հետեւել է և հետեւում է նոյն հայեացքին, որի համաձայն իսկական չէզոքութիւնն այն է, երբ պատերազմող կողմերին բոլորովին այնպէս են վերաբերվում, ինչպէս և միջին պատերազմը: Այդ սկզբունքով է բացատրվում և Ֆրանսիայի ներկայ վարմունքը, որը միշտ հաւատարիմ էր մնայ նրան մինչև անգամ այն դէպքում, եթէ Սալոնիկի ապստամբ կը տայ ուղևորական պատերազմական նաւատորմին: (НОВ.)

Կոմս Բեդլնայթի յօդուածը: Բեդլնայթը «Рyс» լրագրի հեղադրում են. «Կոմս Բեդլնայթը «Berl. Tagebl.» լրագրում մի մեծ յօդուած պահեց «Վաղեկութեան կրէյսերները լուրջ խնդրի առաջ» վերնագրով: Անկասկած,—գրում է Բեդլնայթը,—Բոթանովսկին կարողացել է իր էսկադրայի հեղադրական յարաբերութեւն սահմանել Վաղեկութեան հետ, որով հարաւորութիւն կը ստեղծվի միացնել, վերջապէս, ուղևորական անշատ ոյժերը: Վաղեկութեան կրէյսերները կարող են միանալ Բոթանովսկու հետ բաց ծովում: Ըստ երե-

ւոյթին, Տօգօ Վաղեկութեան կրէյսերները դէմ ուղարկել է նշանաւոր նաւախումբ, որի մէջ, գերակշռութեւն ունենալու համար, պէտք է լինեն գոնէ երեք զրահակիր կրէյսեր և մի քանի արագընթաց տիպի փոքր նաւեր: Այդպիսով Տօգօն Բոթանովսկու դէմ մնում է ընդամենը հինգ զրահակիր կրէյսերներ, շատ կարելի է միայն չորսը, որովհետեւ մինչև այժմ չէ պարզված, թէ արդեօք առաջ խորտակվել է մէկ կրէյսեր թէ ոչ: Որքան աւելի գործունէայ և շարժուն կը լինեն Վաղեկութեան կրէյսերները, այնքան աւելի կը պահանջեն նաւեր նրանք որոնելու համար: (Таш.)

Լօնդոնից «Рyс» լրագրի հեղադրում են. «Համբուրգում կարգուգրած է ստացված, թէ Բոթանովսկին Համբուրգ-Ամերիկա գծի վրա եղող 4 օժանդակ կրէյսեր է ուղարկել՝ հապոստական կոնտրաբանդան որսալու յատուկ նաւ, արշաւանք գործելու հապոստական արիւնքները: Մարզընթաց լինելով, նրանք շատ լաւ համապատասխանում են այդ նպատակին: Բացի դրանից նրանք կը ստիպեն Տօգօին դատել մի քանի պատերազմական նաւեր այդ կրէյսերները բռնելու համար: Ռուսաստանի համար մեծ նշանակութիւն չունի մի քանի օժանդակ կրէյսերների կորուստը, այն ինչ Տօգօի ուղևորական ոյժերի պակասումը մեծ նշանակութեւն կարող է ունենալ: Սակայն զրուցութեամբ պէտք է ընդունել այդ տեղեկութիւնը:

ՄԵՍԿԻՆ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՅ
12 ապրիլ

ԼՕՆԻՕՆ: Բրիտանական Միջերկրական ծովի էսկադրան մեկնեց Մալտայից Մարմարիկա, ուր ատլանտիան էսկադրայի հետ միասին մանեօվրներ կանէ:

ՊԱՐԻՉ: Լուբէն, մինիստրների հետ միասին, ժամանեց Բորդօ: Ընդունելութեան ժամանակ Լուբէն ասաց, որ Ֆրանսիան ամենամեծ յոյսեր ունի բանակի և նաւատորմի վրա, որոնց ոյժը ծառայում է իր խաղաղութեան և երկրի արժանաւորութեան պաշտպանման միջոց:

ՀՈՒՄ: Աւստրիական էրցհերցօգ Ֆրիդրիխը մօտ ժամանակներս կայցելէ իտալական թագաւորին՝ երկու դաշնակից պետութիւնների բարեկամական կապերն աւելի ևս սերտ կերպով ամրացնելու նպատակով:

ՄԱՐԻԻԴ: Կորտեսները բացումը նշանակված է ապրիլի 27-ին:

ՍՕՖԻԱ: Երեկվայ միտինգների ժամանակ հետեւեալ միջնադէպերն են պատահել. Բորիսօգլերական ամբոխը ձեռնից մի յոյն և կոտրաւորեց երկու յոյն խառնութիւնների լուսամուտները: Ոստիկանութիւնը կարգը վերականգնեց: Ֆիլիպպովսկու 60-ի չափ մակերօդայիններ փռքեցին 3 սրճարանի, մի դեղատան, երկու հացագործարանների, 3 ժամանաւոր տըների և յունական ուսումնարանի ապակիները: Ցուցարարների և ոստիկանութեան միջև տեղի ունեցած ընդհարման ժամանակ վիրաւորվել է մի ժամաւոր: Գլխաւոր սկսողների ձեռքակալի են, ինչպէս և երկու յոյն զինուորի, որոնք բռնվել են յունական զինեռան մէջ, և չը նայելով արգելքին, գէնք են ունեցել վրաները: Շարժման առաջն անհետը հաւոր, ոստիկանութեանը հրամայված է գրչերները հսկել յունական թաղերի վրա:

ՍԱՅԳՈՆ: Ռուսական 18 նաւ գտնվում են Կամրանի ծոցում, նրանց մէջ են «Սիւլաւան» և «Օրեօլը», նոյնպէս և գերմանական և ուրիշ փոխադրող 5 նաւեր: Ռուսական վերջին հակառակմանաւը մեկնեց ծովագետ Բոթանովսկու հետից:

ՏՕԿԻՕ: Այստեղ երկիւղ են կրում, որ դժուարութիւններ կարող են ծագել այն բանից, որ չինաստանն անկարող կը լինի ուժով պաշտպանել չէզոքութիւնը: Եւրոպիան եւ ուսմանը դիմումներ է անում «Ազգիւր» ուսուցիչները մեկնելու համար արած պատրաստութիւնների դէմ:

ՀՕՆԳԻՕՆԻ, 12 ապրիլ: Գերմանական կրէյսերի հրամանատարը զեկուցանում է, որ Յորթօլայի նեղուցում տեսել է հապոստական մի մարտանաւ, որը իր ետևից բարձր էր տալիս մի ուրիշ մարտանաւ սաստիկ ֆլագով:

ՇԱՆԳԻՅԱՅ: Եւրոպական ծովի հիւսիսային ջրերը, նոյնպէս և Սուրաբանան ու Լապէլ ռուզման նեղուցները ամեն գրչեր լուսաւորվում են հապոստական ակնանաւերի ցոլա-

ցուցիչներով, որպէս զի խաղաղին ուղևորական էսկադրայի անցնելուն: Հաւանորէն հապոստական նաւատորմը շրջում է Յորթօլայի հաւաքում: Ենթադրում են, որ մառախուղատեղանակը Բոթանովսկու էսկադրային հապոստութիւն կը տայ Յորթօլայի արեւելից անցնելու: Զինական բոլոր ծովագետները թափառում են հապոստական լրտեսները:

ՊԱՐԻՉ: Անգլիական թագաւորը կը ժամանէ Մարսէյլ ապրիլի 16-ին և անյապաղ Պարիզ կը մեկնի: Թագաւորի հանդիպումը Լուբէնի հետ կը լինի ապրիլի 17-ին կամ 18-ին:

ԲԵՐԼԻՆ: Այստեղ քաղաքական շրջաններում առանձին նշանակութիւն չեն տալիս Կրէտէի ցոյցերին: Ինչպէս երևում է, անկարելի է, որ խնամակալ-պետութիւնները համաձայնվեն վերացնել կրէտէի ստորադրված վիճակը և թոյլ տալ նրան միանալու Յունաստանին: Պահպան զօրքերը դեռ ևս Կրէտէուին են և Սուրաբանի ծոցում դեռ կան մի քանի մարտանաւեր: Հէնց այժմ Կրէտէի միացումը վերին աստիճանի վտանգաւոր է: Եթէ մակեդոնացիները կը հետեւեն կրէտացիներին օրինակին, այն ժամանակ Եւրոպան ստիպված կը լինի գործ ունենալու լուրջ հրդեհի հետ:

ՖԻԼԱԴԵԼՖԻԱ: Բուզվելու անձնական բաւելիված Համաժողով քաղաքական գիտութիւնների ամերիկական ընկերութեան մէջ վերջերս խօսած իր ճառում այն կարծիքը յայտնեց, որ Եւրոպիան, իր գերեշխանութեան տակ ունենալով Կորէան, զուցէ և Մանչուրիան, կը դառնայ Ամերիկայի ամենալուրջ մրցակիցը Հեռաւոր Արեւելքում: Այն ժամանակ ամեն ինչ կախված կը լինի այն անազնի ծովային ոյժերից, որ Ամերիկան և անգլիկ ստիպված կը լինեն պահել Հեռաւոր Արեւելքի շրջանում:

ՀՈՒՄ, 11 ապրիլ: Կէսօրից յետոյ Փրանսիական, անգլիական և ուղևորական դեսպանները և Կրէտէի պաշտպան պետութիւնների ներկայացուցիչները խորհրդակցեցին Տիտտօնիի հետ: Խորհրդակցութեան աւարական յայտնի չէ:

13 ապրիլ
ՄԱՆՏԱ, 12 ապրիլ: Անգլիական 3 կրէյսեր մեկնեցին դէպի Կրէտէ:

ՊԱՐԻՉ, 12 ապրիլ: Երեկ երեկոյան Մէսսիայից այստեղ հասաւ Վիլհելմ կայսրը: ՄՕՍԿՎԱ: Նահապետաւոր յայտնեց նահապետական զինուորի զուարթայի նախագահին, որ ապրիլի 22-ին Մոսկվայում նշանակված համազինատուրային ժողովը—ոչ պաշտօնապէս, ոչ էլ մասնաւորապէս—չէ թոյլատրված:

ԼՕՂԻ: Հրէական տօները բոլոր 3 օրերն էլ խաղաղ անցան: Գաղաքում պտտող լուրերը գերմանացիներին և հրէաներին կոտորելու մասին հնարովի երևացին: Ամեն կողմ կենդանութիւն էր տիրում, բայց կարգը բոլորովին չը խաղաղվեց:

ԲԵՐԼԻՆ: Ֆրանսիական մամուլը անգլիական մասը սխալվում է, ենթադրելով, որ Դէկլանէի միտին արտաքին գործերի մինիստրի պաշտօնում այստեղ անբաւականութիւն է յարուցանում: Մինիստրի անձնաւորութիւնը բոլորովին նշանակութիւն չունի: Այստեղ քաղաքականութիւնն անփոփոխ է մնացել այն օրից, երբ պարզվեց, որ Ֆրանսիան ձգտում է խնամակալ լինել Մարօկոյի վրա, իսկ Գերմանիան ձգտում է Մարօկոյի անկախութիւնը: Անգլիական լրագրիչների տարածած լուրը, թէ Գերմանիան ուզում է ընդարձակել իր սահմանները Շանտունում, սուտ է: Գերմանիան թէ Զինաստանում և թէ այլ տեղերում պահանջում է «բաց դռներ» քաղաքականութիւն և դէմ է որ և է առանձնաշնորհման: Այն լուրը, որ իբր թէ Ամերիկան ծախում է Ֆիլիպպին կղզիները Եւրոպային 400 միլիոն դոլլարի, որպէս զի առաջն անգամ հապոստական գաղթականութեան դէպի Ամերիկա—անմիտ է: Եւրոպական դաղթականութեան նպատակն այժմ Կորէան ու Զինաստանն են, ուր ուղարկվում են բուրգայական հոգեւորականներ իբր քաղաքական պրօպագանդիստներ: Եւրոպացիները մշակում են Զինաստանը մի որոշ ու պարզ ծրագրով, մատակարարելով նրանց հապոստացի պաշտօնեաներ և խնտրուկտօրներ: Բերլինի դիպլոմատիկական շրջանները բաւական զարմացած են, որ Ֆրանսիան պատրաստ է բաւարարութիւն տալու Եւրոպայի պահանջներին Բոթանովսկու էսկադրայի առթիւ, այն ժամանակ, երբ անգլիացիները լիովին խրախուսում են Ֆրանսիայի այդ վարմունքը:

13 ապրիլ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հեռաւոր Արեւելքից ապրիլի 12-ին պաշտօնական տեղեկութիւններ չեն ստացվել:

ԳՈՒԹՉՈՒԼԻՆ, 13 ապրիլ: (Սեւ. Թղթ.): հետ կը միանայ մի շարքի յետոյ:—Լուր

Յաւառ, բայց դեռ ոչ որից չը հաստատված լուրեր են պտտում Կայիւսեանից հարաւ եղած մի ոչ-մեծ կուր մասին: Մեր զորամասը, խոնարհ գետի հովտով շարժվելով, Մէնանի մօտ յայտնագործեց թշնամուն: Մեր թնթանօթները անհետկամ և շրջապատված լինելու երկիւղից ստիպված, հապոստացիները, մօտ 2 բառալիւն հետեւել և մի գունդ հեծեալօր, յետ քաշվեցին դէպի լեռանցքը, այրելով պահանջները: Հետեւել օրը մեր զորամասը, անցնելով Երթուր գետը, հանդիպեց հետեւելի և գնդաձիգների կապին, որից յետոյ հապոստացիները վճռական յարձակման դիմեցին: Մեր զորամասը, տեսնելով թշնամու գերազանց ուժերը, նահանջեց դէպի խոնարհ: Մեր կորուստները չնչին են:

ԿՕՊԵՆՀԱՅԵՆ, 13 ապրիլ: Իսլանդիայում գտնվել են ոսկու հանքեր: Այդ գիւտը սենսացիա է առաջացրել: Կազմվում է մի ընկերութիւն շահագործման համար: Անգլիայից սպասում են հանքափորների դալստեան:

ԿԱՆԵՍ, 12 ապրիլ: Ազգային ժողովը համաձայնութեան եկաւ ապստամբների հետ և որոշում կայացրեց, որոնք պնդում են կղզին Յունաստանի հետ միացնելու վրա և Երթուրութեանը հրաւիրում են գործադրել ժամանակաւորապէս գոյութիւն ունեցող օրէնքները:

ՊԱՐԻՉ, 12 ապրիլ: Նշանակված են պատգամաւորներ Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև առեւտրական դաշնագիր կնքելու յանձնաժողովի համար: Առեւտրի մինիստրի ներկայացուցիչները կը լինեն Վիժելը և Վասսիլիսը:

ՏՕՂԻՕ, 12 ապրիլ: Որովհետեւ ծովային հաղորդակցութիւնների ազատութիւնը հեշտութեամբ կարող է վտանգի ենթարկվել, հապոստացիները վերջին շաբաթները արտակարգ կերպով արգաւստում են զօրքերի ուղվածութեանը և թնդանօթների փոխադրութիւնը: Մանչուրիա: Պահեստամասերը, որ պատերազմի սկզբում 52 բառալիւն էին, այժմ դուռն են 52 գունդ, որոնք կազմում են 6-դ և 7-դ բանակները: Բարօն Հօտինգհամ, որ մինչև այժմ Կորէայում եղած բանակի հրամանատարն էր, պէտք է այդ բանակներից մէկի հրամանատարութիւնն ստանայ: Օլաւալին Կորէայից արդէն մի քանի շաբաթ առաջ օժանդակութիւն են ուղարկել, որոնք դեռ ճանապարհին են:

ՀՕՆԳԻՕՆԻ, 12 ապրիլ: Տօգօն արդէն մօտ չիման է մտել ուղևորական էսկադրայի հետ, բայց նախ քան ճակատամարտ տալը մտադիր է ականներով փասել ուղևորական մարտանաւերին:

ՊԱՐԻՉ: Ենթադրում են, որ Տիտտօնիի հետ Պրէտական հարցով շահագործված պետութիւնների ներկայացուցիչների երէկ ունեցած տեսակցութեան մէջ լուրջ վիճիւններ են կախացված: Որոշված է խիստ միջոցների չը դիմել կղզու վրա կարգը վերահաստատելու համար, երկու կողմի Բալկանեան թերակղզու գործերի վրա վատ ազդեցութիւն թողնելուց:

ԲՕՐԴՕ: Լուբէն ներկայ էր Գամբետտայի արձանի բացմանը: Բազմաթիւ ճառեր արտասանվեցին պետական հռչակաւոր գործչի յիշատակին: Հանդէսը փառաւոր էր: Արձանի բացումից յետոյ Լուբէն նախաձայն առաջարկեց 110 հոգու պրէֆէկտուրայի մէջ, երեկոյան ժողովրդի համար կառուցված էտօրատանիքից մէկը քանդելու, մօտ 5 հոգի թիւի վերջեր ստացան:

ՍՕՖԻԱ. Հասարակական աշխատանքների մինիստր յայտնում է, որ յունիսի 2—9-ին կայանալու է հասարակական աճուրդ Տըրնօվօ-Բարուշիտայի երկաթուղու կառուցման համար:

ՍԱՅԳՈՆ: Ռուսական կրէյսերներ մի մասը ժամանեց Կամրանեան ծոցի մօտ և կանգնեց նրանից դուրս, իսկ երկու հատ եռախողով կրէյսերներ մտան ծոցի մէջ:

ՀՕՆԳԻՕՆԻ: Հաղորդում են, որ ապրիլի 8-ին 4 փոխադրանաւոր ապրանքներ վերցրին Սալօն հասցնելու համար:

ՏՕԿԻՕ: Ֆրանսիայի և Եւրոպայի միջև եղած վերջին ընդհարման մէջ Անգլիան մտադրութիւն յայտնեց պաշտպանելու հապոստացիին: Անգլիական 2 մարտանաւ ապրիլի 6-ին դուրս եկան Հոնգկոնգի և ճեպընթաց դիմեցին դէպի Կամրանի ծոցը: Այստեղ ենթադրում են, որ Բալկանական էսկադրան Տօնկի-նի ծոցում է: Ենթադրում են, որ III էսկադրան պաշար է վերցնում հօլանդական ջրերի չէզոք շրջանում և Բոթանովսկու էսկադրայի հետ կը միանայ մի շարքի յետոյ:—Լուր

